

Արձանագրություն № 1 (301)
ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017 թ-ի սեպտեմբերի 20-ի նիստի

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 27 անդամներից 23-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Օրակարգ.

1. 2017-2018 ուս. տարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատում:
2. 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:
3. Մոսկվայի կառավարության կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:
4. ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի առկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:
5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Պ. Բալայանը ներկայացրեց գիտական խորհրդի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային պլանը: Նիստերի ծրագրված օրակարգն ընդգրկում է ֆակուլտետի ամբիոնների կողմից իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում, ընթացիկ և եզրափակիչ քննությունների արդյունքների ամփոփում, ֆակուլտետի ընթացիկ գործունեության հետ կապված այլ հիմնական հարցերի քննարկում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային պլանը:

2. ԼՍԵՑԻՆ՝ 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Պ. Բալայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

Օվեյան Իլոնա (3-րդ կուրս, /ռուսաց լեզու և գրականություն/)՝ **Վ.Քոչարյանի** անվան կրթաթոշակ.

Ավետիսյան Ալիսա (բակալավրիատի 4-րդ կուրս՝ /լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում՝ ռուսաց լեզու/)՝ Վ.Բրյուսովի անվան կրթաթոշակ:

3. ԼՍԵՑԻՆ՝ Մոսկվայի կառավարության կողմից տրամադրվող կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը, դոցենտ Ս. Լալայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած առաջադիմությունը՝ որպես Մոսկվայի կառավարության կողմից տրամադրվող կրթաթոշակների թեկնածուներ երաշխավորել:

Մարիամ Արթուրի Հայրապետյանին՝ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող,

Գոհար Արծրունի Ասատրյանին՝ բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանող:

4. ԼՍԵՑԻՆ՝ Հաղորդում ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ատկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Խորհրդի նախագահ Պ. Բալայանը ներկայացրեց ֆակուլտետի ցերակային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության ամփոփ արդյունքները:

Մագիստրատուրա ընդունելության մասին. 9 ուսանող դիմել է մագիստրատուրայի **ռուսաց լեզու և գրականություն** մասնագիտության, 7 - **Լեզվաբանություն և ՄՄՀ:**

Բակալավրիատի ընդունելության մասին. ռուսաց լեզու և գրականություն բաժին ընդունվել է 32 ուսանող: Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում 5 ուսանող: Առաջարկում ենք նոր մասնագիտություն **ՄՄՀ և թարգմանություն:**

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ հարցեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկանի տեղակալ Գագարովա Դ. Յ. տեղեկություն ներկայացրեց նոր ուս. տարում տեղ գտած փոփոխությունների մասին: Այլևս ներկայության համար գնահատական չի տրվելու, պետք է վերանայել տոմսերը: 60 ժամ բացակայելու դեպքում դեկանատի կողմից նկատողություն, 90 ժամ – ռեկտորի կողմից նկատողություն, 120 ժամ – հեռացում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ